ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ՈՐՈՇՈՒՄ

«29» հոկտեմբերի 2021 թվականի N 281-Հ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՑ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասի 5-րդ կետով՝ Հաշվեքննիչ պալատը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունում 2021 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացությունը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ Լ. ՅՈԼՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021թ.
հոկտեմբերի 29-ի թիվ ***281-Ա*** *որոշմամբ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՑ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածական մաս - էջ 2
2. Հապավումներ - էջ 4
3. Ամփոփագիր - էջ 5
4. Հաշվեքննության հիմնական արդյունքներ - էջ 7
5. Հաշվեքննության օբյեկտի ֆինանսական ցուցանիշներ - էջ 8
6. Հաշվեքննությամբ արձանագրված այլ փաստեր - էջ 15
7. Հավելվածներ - էջ 17

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021 թվականի օգոստոսի 2-ի թիվ 218-Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ ֆինանսների նախարարություն:
Հաշվեքննության առարկան	ՀՀ ֆինանսների նախարարության 2021 թվականի պետական բյուջեի վեց ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննության առարկայի չափանիշները	«Պետական պարտքի մասին» ՀՀ օրենք, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենք, «Հայաստանի Հանրապետության 2021թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 2020թ. դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 2215-Ն որոշում, ՀՀ վարչապետի 2020թ. հունվարի 9-ի «ՀՀ 2021 թվականի բյուջետային գործընթացը սկսելու մասին» թիվ 5-Ա որոշում:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2021 թվականի հունիսի 30-ը ներառյալ:
Հաշվեքննության կատարման ժամկետը	2021 թվականի օգոստոսի 9-ից մինչև հոկտեմբերի 29-ը::
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020թ հուլիսի 30-ի թիվ 132–Լ որոշմամբ հաստատված «ՀՀ պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և

տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույց»-ի համաձայն:

Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ և վերակատարում ընթացակարգերը:

Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում	Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի չորրորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Դավիթ Չիբուխչյանը:

2. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

1. **Նախարարություն** – Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

2. **Ծրագիր 1** – (1006-13001) «Կառավարության պարտքի սպասարկում» «Կառավարության պարտքի սպասարկում (տոկոսավճարներ)» - (0170101) (Արտաքին տոկոսավճարներ):

3. **Ծրագիր 2** – (1006-13001) «Կառավարության պարտքի սպասարկում «Կառավարության պարտքի սպասարկում (տոկոսավճարներ)» - (01070101) (Ներքին տոկոսավճարներ):

4. **Ծրագիր 3** – (1212-12002) «Ֆինանսական աջակցություն տեղական ինքնակառավարման մարմիններին» «Պետական բյուջեից համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաներ և Ազգային Ժողովի ընդունած օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների կորուստների փոխհատուցում» (01080101):

5. **ԾՐԱԳՐԵՐ** - **Ծրագիր 1-ից մինչև Ծրագիր 3-ը** ներառյալ:

6. **Բազային Նախարարություն** – Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

7. Հոդված 1 – (442200) «Արտաքին տոկոսավճարներ»:

8. Հոդված 2 – (441100) «Ներքին տոկոսավճարներ»:

9. Հոդված 3 – (463300) «Պետական բյուջեից համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաներ» և (463400) «Օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների կորուստների փոխհատուցում»:

3. ԱՄՓՈՓԱԳԻՐ

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ի շրջանակներում 2021թ. վեց ամիսների պլանների հանրագումարները կազմել են 122,824,179.5 հազ. դրամ, իսկ ճշտված պլանների հանրագումարները՝ 122,754,179.5 հազ. դրամ: 70,000.0 հազ. դրամի նվազումը վերաբերում է Ծրագիր 1-ին և արդյունք է 2021թ. առաջին կիսամյակում վերադասի կողմից սահմանված կարգով ներքին վերաբաշխման: Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ի 2021թ. վեց ամիսների ֆինանսավորումները (դրամարկղային ծախսեր) և փաստացի ծախսերը կազմել են 119,428,387.0 հազ. դրամ, որը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 97,3%, ընդ որում՝ Ծրագիր 1-ում՝ 92,7%, Ծրագիր 2-ում՝ 98,8% և Ծրագիր 3-ում՝ 100,0%:

Նախարարության 2021թ. վեց ամիսների ԾՐԱԳՐԵՐ-ի ճշտված պլանի և ֆինանսավորման տարբերությունները պայմանավորված են հետևյալ հանգամանքներով (տես՝ Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ -ի 2021թ. վեց ամիսներ ճշտված պլանի նկատմամբ թերֆինանսավորման պատճառների վերաբերյալ

(հազ. դրամ)

Թիվ	Ծրագրեր	2021թ. վեց ամիսներ			Թերֆինանսավորման պատճառներ
		Ճշտված պլան	Ֆինան-սավորում	Թերֆինան-սավորում	
1	*2*	*3*	*4*	*5*	*6*
1	Ծրագիր 1	36,652,952.3	33,991,306.5	2,661,645.8	• Վեցամսյա ԱՄՆ դոլարի LIBOR, վեցամսյա EURIBOR և SDR տոկոսադրույքի կանխատեսումային և 2021թ. առաջին կիսամսյակի վճարումների համար կիրառված փաստացի տոկոսադրույքների տարբերություն: • 2020 թվականի և 2021 թվականի առաջին կիսամսյակների ընթացքում մի շարք վարկերի գծով մասհանումների պլանային ցուցանիշի էական թերակատարում: • SDR-ի ԱՄՆ դոլարի նկատմամբ կանխատեսումային և փաստացի ձևավորված փոխարժեքների տարբերություն: • Արտարժույթների նկատմամբ ՀՀ դրամի կանխատեսումային և փաստացի ձևավորված փոխարժեքների տարբերություն:
2	Ծրագիր 2	53,802,735.1	53,138,588.4	664,146.7	Կանխատեսվածի հանդեպ փաստացի եկամտաբերության տարբերություն:
1	*2*	*3*	*4*	*5*	*6*

Ընդամենը՝	122,754,179.5	3
	32,298,492.1	Ծրագիր 3
	119,428,387.0	32,298,492.1
	3,325,792.5	---
----		-----

4. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Նախարարությունից պահանջվել է ամբողջական տեղեկատվության տրամադրում, որի ուսումնասիրությամբ, ինչպես նաև օգտվելով Նախարարության գանձապետական վճարահաշվարկային էլեկտրոնային («LSFINANCE» և «LSREP») համակարգերի շտեմարաններից և հասանելի այլ պաշտոնական աղբյուրներից ստացվել է բավարար տեղեկատվություն սույն հաշվեքննությունն իրականացնելու համար:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2021թ. վեց ամիսների ՀՀ պետական բյուջեի վեց ամիսների հաշվեքննության իրականացման համար դիտարկվել են նախատեսված ծրագրերի և միջոցառումների մասով հաշվետու ժամանակահատվածի բյուջեի կատարողականները: Հաշվեքննության ժամանակ կարևորվել է ՀՀ կառավարություն ներկայացրած բյուջեի կատարողականի վերաբերյալ հաշվետվություններում բերված ցուցանիշներում փաստացի կատարվածի իրական ծավալների ընդգրկելու խնդիրները:

Նախարարության 2021թ. ՀՀ պետական բյուջեի վեց ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության նկատմամբ իրականացված հաշվեքննության ընթացքում անհամապատասխանություններ և էական խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել:

5. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ի 2021թ. տարեկան պլանը կազմել է 259,232,850.9 հազ. դրամ, իսկ ճշտված պլանը՝ 259,047,850.4 հազ. դրամ: Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ի 2021թ. վեց ամիսների պլանը կազմել է 122,824,179.5 հազ. դրամ, ճշտված պլանը՝ 122,639,179.5 հազ. դրամ, ֆինանսավորումը, դրամարկղային և փաստացի ծախսը 119,428,387.1 հազ. դրամ (տարեկան ճշտված պլանի 46,1%-ը): Նախարարության 2021թ. տարեկան և վեց ամիսների ֆինանսական ամփոփ ցուցանշները ներկայացված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ի 2021 թվականի վեց ամիսների ամփոփ ֆինանսական ցուցանիշներ

(հազ. դրամ)

Ծրագրային բյուջետային ֆինանսավորման անվանումը, *(ծածկագիրը)*	**2021թ. տարեկան պլան**	Փոփոխություններ տարեկան պլանում		**2021թ. տարեկան ճշտված պլան**	2021թ. վեց ամիսներ							Կատարման տոկոսը	
		ՀՀ կառավարության կողմից (+, -)	*Վերադասի կողմից (+, -)*		**2021թ. առաջին կիսամյակի պլան**	*ՀՀ կառավարության կողմից (+, -)*	*Վերադասի կողմից (+, -)*	**2021թ. առաջին կիսամյակի ճշտված պլան**	Փաստացի ֆինանսավորում	Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս	Տարեկան ճշտված պլանի նկատմամբ	Հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանի նկատմամբ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
(104021) Նախարարության **ԾՐԱԳՐԵՐ**, *այդ թվում՝*	**259,232,850.9**	*-115,000.0*	*-70,000.0*	**259,047,850.9**	**122,824,179.5**	--	*-70,000.0*	**122,639,179.5**	119,428,387.0	119,428,387.0	119,428,387.0	46.1	97.4
Ծրագիր 1	**194,695,686.4**	*-115,000.0*	*-70,000.0*	**194,510,686.4**	**36,722,952.3**	--	*-70,000.0*	**36,537,952.3**	33,991,306.5	33,991,306.5	33,991,306.5	41.3	92,7
Ծրագիր 2		--	--		**53,802,735.1**	--	--	**53,802,735.1**	53,138,588.4	53,138,588.4	53,138,588.4	47.3	98.8

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Ծրագիր 3	**64,537,164.5**	-	-	**64,537,164.5**	**32,298,492.1**	-	-	**32,298,492.1**	32,298,492.1	32,298,492.1	32,298,492.1	*50,0*	*100.0*

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արտաքին վարկերի գծով պարտքը ձևավորվել է 20 աղբյուրներից (7 օտարերկրյա պետություններ, 10 միջազգային կազմակերպություններ և 3 առևտրային բանկեր) ներգրավված թվով 227 վարկերից կամ վարկերի մասնաբաժիններից: 2021թ. հունիսի 30-ի դրությամբ արտաքին վարկերի գծով պարտքը ձևավորվել է 20 աղբյուրներից (7 օտարերկրյա պետություններ, 10 միջազգային կազմակերպություններ և 3 առևտրային բանկեր) ներգրավված թվով 228 վարկերից կամ վարկերի մասնաբաժիններից: Նշված աղբյուրներից վարկերի կամ վարկերի մասնաբաժինների սպասարկման գծով վճարման ենթակա տոկոսավճարները հաշվարկված են համաձայն վարկային համաձայնագրերով սահմանված ժամանակացույցերի:

2021թ. առաջին կիսամյակի ընթացքում արտաքին վարկերի սպասարկումն իրականացվել է վերոհիշյալ 19 աղբյուրներից (բացառությամբ ԵՄ /Եվրապական Միություն/) ներգրավված վարկերի գծով ձևավորված թվով 202 վարկերից կամ վարկերի մասնաբաժիններից: Արտաքին վարկերի սպասարկումն ըստ պայմանագրերի 2021թ. առաջին կիսամյակում կազմել է 19,262,716.5 հազ. ՀՀ դրամ կամ 36,760,586.8 ԱՄՆ դոլար (տես՝ Աղյուսակ 3):

Աղյուսակ 3

2021թ. վեց ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջեից միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների և առևտրային բանկերի կողմից ՀՀ կառավարությանը տրամադրված վարկերի սպասարկման մասին

Թիվ	Օտարերկրյա պետություններ, միջազգային կազմակերպու-թյուններ, առևտրային բանկեր	**31 դեկտեմբերի 2020թ.**-ի դրությամբ տրամադրված վարկերի կամ վարկերի մասնաբաժինների		**30 հունիսի 2021թ.**-ի դրությամբ դրությամբ տրամադրված վարկերի կամ վարկերի մասնաբաժինների		Վճարված տոկոսավճարներ **30.06.2021թ.-ի** դրությամբ	
		Քանակ (հատ)	***Գումար (մլն. ԱՄՆ դոլար)***	***Քանակ (հատ)***	***Գումար (մլն. ԱՄՆ դոլար)***	***(ԱՄՆ դոլար)***	***(հազ. ՀՀ դրամ)***
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*
1	**ՎԶՄԲ** (Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ)	**33**	**793.3**	**34**	**802.9**	6,023,702.0	3,161,536.3

1	2	3	4	5	6	7	8
2	ԶՄԸ (Վերակառուցման և Միջազգային Ընկերակցություն)	66	994.5	66	955.1	5,161,064.5	2,712,399.3
3	ՎԶԵԲ (Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ)	12	20.6	12	20.5	156,862.6	81,871.3
4	ԵՆԲ (Եվրոպական Ներդրումային Բանկ)	26	133.0	26	132.7	1,024,294.1	534,609.8
5	ԳԶՄՀ (Գյուղատնտեսական Զարգացման Միջազգային Հիմնադրամ)	7	67.3	7	65.1	304,451.6	158,811.6
6	ՕՄԶՀ (ՕՊԵԿ-ի Միջազգային Զարգացման Հիմնադրամ)	5	50.2	5	47.8	993,030.0	522,919.8
7	ԱԶԲ (Ասիական Զարգացման Բանկ)	21	774.9	21	762.6	6,564,946.2	3,450,071.0
8	ԱՄՀ (Արժույթի Միջազգային Հիմնադրամ)	2	357.7	2	345.6	2,542,845.7	1,323,802.2
9	ԵՄ (Եվրոպական Միություն)	2	79.7	2	77.4	0,0	0,0
10	ԵԶԲ (Եվրասիական Զարգացման Բանկ)	3	317.0	3	320.2	3,357,357.0	1,757,741.0
	Ընդամենը միջազգային կազմակերպություններ	177	3,588.2	178	3,529.8	26,128,553.5	13,703,762.2
1	**Գերմանիայի ՎՎԲ** (Վերականգնողա-կան Վարկերի Բանկ)	22	278.1	22	267.7	2,733,555.0	1,401,128.0
2	ՌԴ (Ռուսաստանի Դաշնություն)	3	359.4	3	340.9	5,495,973.3	2,897,381.5
3	ՖՀ (Ֆրանսիայի Հանրապետություն)	11	149.7	11	144.7	923,025.1	478,686.8
4	ՃՀ (Ճապոնիայի Հանրապետություն)	3	227.6	3	207.4	914,082.1	484,232.4
5	ԱՄՆ (Ամերիկայի Միացյալ Նահանգներ)	4	14.7	4	13.7	158,225.3	83,656.6
6	**Աբու Դաբիի Զարգացման Հիմնադրամ**	1	4.0	1	3.7	69,921.8	36,527.1

7	Չինաստանի Արտահանման - Ներմուծման Բանկ	1	23.0	1	22.5	234,651.8	124,440.5
Ընդամենը օտարերկրյա պետություններ՝		45	1,056.5	45	1,001.0	10,529,434.3	5,506,053.1
1	ԿԲՍ ԲԱՆԿ (Բելգիա)	1	3.0	1	2.6	10,721.9	5,623.5
2	Ռաֆայզն ԲԱՆԿ (Ավստրիա)	1	7.7	1	7.0	36,182.1	18,687.4
3	Էստե ԲԱՆԿ (Ավստրիա)	3	9.9	3	9.2	55,694.9	28,590.2
Ընդամենը առևտրային բանկեր՝		5	20.6	5	18.8	102,598.9	52,901.1
ԱՄԲՈՂՋԸ՝		227	4.665.2	228	4.549.6	36,760,586.8	19,262,716.5

Նախարարության Ծրագիր 2-ում 2021թ. վեց ամիսների պլանը փոփոխությունների չի ենթարկվել և սահմանվել է 53,802,735.1 հազ. դրամ, սակայն փաստացի ֆինանսավորումը կազմել է 53,138,588.4 հազ. դրամ, ճշտված պլանի հանդեպ կատարողականը կազմել է 98,8%, իսկ ըստ ֆինանսավորման կատարողականը՝ 100,0%: Դրամարկղային ծախսի (ֆինանսավորման) և ճշտված պլանի միջև առկա 664,146.7 հազ. դրամի շեղումը հաշվեքննության օբյեկտը պայմանավորել է կանխատեսվածի հանդեպ փաստացի եկամտաբերության տարբերությամբ:

2021թ. վեց ամիսների ընթացքում (Ծրագիր 1 և Ծրագիր 2) ՀՀ պետական գանձապետական պարտատոմսերի (արժեկտրոններ և այլ վճարներ) տոկոսավճարները կազմել են 53,138,588.4 հազ. դրամ (տես՝ Աղյուսակ 4):

Աղյուսակ 4

2021թ. վեց ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջեից պետական գանձապետական պարտատոմսերի սպասարկման գծով կատարված վճարումների մասին

(հազար դրամ)

Թիվ	Պարտատոմսի տեսակներ	Տոկոսավճարներ (արժեկտրոն և այլ վճարներ)	Մարում	Հետգնում	Ընդամենը վճարումներ
1	*2*	*3*	*4*	*5*	*6*

1	Երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսեր	39,936,511.3	16,765,297.0	15,694,780.0	72,396,588.3
2	Միջնաժամկետ արժեկտրոնային պարտատոմսեր	11,757,018.0	43,510,250.0	2,000,000.0	57,267,268.0
3	Կարճաժամկետ պարտատոմսեր	1,191,214.5	31,207,986.5	----	32,399,201.0
4	Խնայողական արժեկտրոնային պարտատոմսեր	253,844.6	998,439.0	401,807.0	1,654,090.6
	Ընդամենը՝	**53,138,588.4**	**92,481,972.5**	**18,096,587.0**	**163,717,147.9**

2021թ. վեց ամիսների ընթացքում (Ծրագիր 1 և Ծրագիր 2) ՀՀ պետական բյուջեից պետական արտարժութային պարտատոմսերի սպասարկման գծով կատարված վճարումները կազմել են 14,728,590.0 հազ. դրամ կամ 27,750,000.0 ԱՄՆ դոլար (տես՝ Աղյուսակ 5):

Աղյուսակ 5

2021թ. առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ պետական բյուջեից պետական արտաարժույթային պարտատոմսերի սպասարկման գծով կատարված վճարումների մասին

Թիվ	Պետական արտարժութային պարտատոմսեր	Տոկոսավճարներ (արժեկտրոն և այլ վճարներ)	
		30.06.2021թ. դրությամբ ***(ԱՄՆ դոլար)***	***(հազ. ՀՀ դրամ)***
1	2025թ. մարման ենթակա պետական արտարժութային պարտատոմսեր	17,875,000.0	9,487,335.0
2	2029թ. մարման ենթակա պետական արտարժութային պարտատոմսեր	9,875,000.0	5,241,255.0
3	2031թ. մարման ենթակա պետական արտարժութային պարտատոմսեր	0.0	0.0
	Ընդամենը՝	27,750,000.0	14,728,590.0

Նախարարության Ծրագիր 3-ի 2021թ. վեց ամիսների պլանը, ճշտված պլանը, փաստացի ֆինանսավորումը, դրամարկղային և փաստացի ծախսերը կազմել են 32,298,492.1 հազ. դրամ: Հաշվեքննության ընթացքում նշված ամփոփ ֆինանսական ցուցանիշների գծով տարբերություններ չեն արձանագրվել, դեբիտորական և կրեդիտորական պարտքեր չեն հաշվառվել:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության դրույթների՝ պետական բյուջեից համայնքներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տվյալ տարում տրամադրվող դոտացիաների ընդհանուր գումարը (ներառյալ՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 93-րդ հոդվածի համաձայն պետության կողմից համայնքներին տվյալ տարում տրվող փոխհատուցման գումարները) սահմանվում է ոչ պակաս, քան տվյալ տարվան նախորդող երկրորդ բյուջետային տարում (2019թ.) ՀՀ համախմբված բյուջեի փաստացի եկամուտների հանրագումարի 4 տոկոսը (64,596,984.0 հազ. դրամ):

ՀՀ Վարչապետի 2020թ. հունվարի 9-ի «ՀՀ 2021 թվականի բյուջետային գործընթացն սկսելու մասին» թիվ 5-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 7-րդ կետի համաձայն՝ համայնքներին ՀՀ 2021թ. պետական բյուջեից տրամադրվելիք ֆինանսական համահարթեցման սկզբունքով հատկացվող դոտացիաների գումարների հաշվարկում կիրառված տվյալները համապատասխան մարմինների կողմից տրամադրվել են Բազային Նախարարությանը: ՀՀ համայնքների բյուջեներին օրենքով սահմանված կարգով ֆինանսական համահարթեցման սկզբունքով հատկացվող դոտացիաների և ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքների 2019թ. բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման նպատակով նախատեսված հատկացումների ընդհանուր ծավալի բաշխումն ըստ առանձին համայնքների ներկայացված է «Հայաստանի Հանրապետության 2021թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի թիվ 2 հավելվածով: ՀՀ համայնքների բյուջեներին 2021թ. ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաները հաշվարկվում և տրամադրվում են հանրապետության բոլոր՝ թվով 502 համայնքներին, այդ թվում՝ ք. Երևանին, Արագածոտնի մարզում՝ 72 համայնքներին, Արարատի մարզում՝ 95, Արմավիրի մարզում՝ 97, Գեղարքունիքի մարզում՝ 57, Լոռու մարզում՝ 56, Կոտայքի մարզում՝ 42, Շիրակի մարզում՝ 42, Սյունիքի մարզում՝ 8, Վայոց ձորի մարզում՝ 8 և Տավուշի մարզում՝ 24 համայնքներին: ՀՀ ֆինանսների նախարարությունը գանձապետական համակարգի միջոցով, համաձայն «ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի թիվ 2 հավելվածի և ՀՀ կառավարության 2020թ. դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության 2021թ. պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 2215 որոշման 4-րդ հավելվածի 1-ին աղյուսակով սահմանված համամասնությունների, համայնքներին յուրաքանչյուր ամիս փոխանցվում են դոտացիաների գումարները և ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքների 2019թ. բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման նպատակով նախատեսված հատկացումները:

2021թ. օրենքով նախատեսված 64,596,984.0 հազ. դրամից (դոտացիա՝ 64,537,164.5 հազ. դրամ + կորուստներ՝ 59,819,5 հազ. դրամ) 2021թ. առաջին կիսամյակում համայնքներին փաստացի փոխանցվել է 32,298,492.1 հազ. դրամ ընդհանուր գումար, որի մեջ ներառված է նաև Նախարարության Ծրագիր 3-ում (463400) «Օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների կորուստների փոխհատուցում» հոդվածով համայնքներին տրամադրված 29,909.8 հազ. դրամ գումարը, ինչը արտացոլվել է նաև Նախարարության Ծրագիր 3-ի արդյունքային, ոչ ֆինանսական ցուցանիշների համապատասխան հաշվետվության մեջ: Հաշվեքննության առարկա հանդիսացող զուտ դոտացիաների հանրագումարը Նախարարության Ծրագիր 3-ում կազմել է 32,268,582.3 հազ. դրամ:

Դոտացիաների փաստացի տրամադրված գումարներն արտահայտվում են համայնքների բյուջեներում, վերջիններիս վերաբերյալ համայնքների ամենամսյա եկամուտների հաշվետվություններում, ինչպես նաև պարբերաբար տեղադրվում համայնքների, ՀՀ մարզպետարանների և Բազային Նախարարության պաշտոնական կայքերում:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ Բազային Նախարարության կողմից ըստ տարբեր նախարարություններից և գերատեսչություններից ստացված ելակետային տվյալների հիման վրա հաշվարկված համայնքներին հասանելիք դոտացիաների գումարների, և Նախարարության կողմից, ըստ գանձապետական համակարգի դրանց հատկացման փաստացի ֆինանսական ցուցանիշների միջև տարբերություններ չեն առաջացել:

6. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

Հաշվեքննությամբ պարզվել է, որ.

5.1 2021թ. հունիսի 30-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 4,393.5 մլրդ. ՀՀ դրամ կամ 8,869.0 մլն. ԱՄՆ դոլար, իսկ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այն կազմել էր 4,164.3 մլրդ. ՀՀ դրամ կամ 7,968.5 մլն. ԱՄՆ դոլար, այսինքն ՀՀ պետական պարտքն աճել է 229.2 մլրդ. ՀՀ դրամով (5,5 %) կամ 900.5 մլն. ԱՄՆ դոլարով (11,3 %):

5.2 2021թ. հունիսի 30-ի դրությամբ ՀՀ կառավարության պարտքը կազմել է 4,161.4 մլրդ. ՀՀ դրամ կամ 8,400.9 մլն. ԱՄՆ դոլար, իսկ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այն կազմել էր 3,923.9 մլրդ. ՀՀ դրամ կամ 7,508.6 մլն. ԱՄՆ դոլար, այսինքն ՀՀ կառավարության պարտքն աճել է 237.5 մլրդ. ՀՀ դրամով (6,1%) կամ 892.3 մլն. ԱՄՆ դոլարով (11,9%): ՀՀ կառավարության պարտքի կազմում արտաքին պարտքը 2021թ. հունիսի 30-ի դրությամբ կազմել է 3,075.9 մլրդ. ՀՀ դրամ կամ 6,209.5 մլն. ԱՄՆ դոլար, իսկ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այն կազմել էր 2,926.3 մլրդ. ՀՀ դրամ կամ 5,599.5 մլն. ԱՄՆ դոլար, այսինքն 2021թ. առաջին կիսամյակի կտրվածքով ՀՀ կառավարության արտաքին պարտքն աճել է 149.6 մլրդ. ՀՀ դրամով (5,1%) կամ 610.0 մլն. ԱՄՆ դոլարով (10,9%), որից.

5.2.1 Արտաքին վարկերն և փոխառությունները նվազել են 184.6 մլրդ. ՀՀ դրամով (7,6%) կամ 116.2 մլն. ԱՄՆ դոլարով (2,5%):

5.2.2 Ոչ ռեզիդենտների կողմից ձեռքբերված պետական գանձապետական պարտատոմսերն աճել են 0.1 մլրդ. ՀՀ դրամով (3,0 %) կամ 0.6 մլն. ԱՄՆ դոլարով (9,5%):

5.2.3 ոչ ռեզիդենտների կողմից ձեռքբերված արտարժույթային պետական պարտատոմսերն աճել են 334.5 մլրդ. ՀՀ դրամով (69,6 %) կամ 725.9 մլն. ԱՄՆ դոլարով (79,0%):

5.2.4 արտաքին երաշխիքները նվազել են 0.4 մլրդ. ՀՀ դրամով (8,9%) կամ 0.3 մլն. ԱՄՆ դոլարով (3,5%) (տես՝ Հավելված 1):

5.3 ՀՀ կառավարության պարտքի կազմում ներքին պարտքը 2021թ. հունիսի 30-ի դրությամբ կազմել է 1,085.5 մլրդ. ՀՀ դրամ կամ 2,191.4 մլն. ԱՄՆ դոլար, իսկ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այն կազմել էր 997.6 մլրդ. ՀՀ դրամ կամ 1,909.1 մլն. ԱՄՆ

դոլար, այսինքն 2021թ. ՀՀ կառավարության ներքին պարտքն աճել է 87.9 մլրդ. ՀՀ դրամով (8,8%) կամ 282.3 մլն. ԱՄՆ դոլարով (14,8%), որից.

5.3.1 Ռեզիդենտների կողմից ձեռքբերված պետական գանձապետական պարտատոմսերն աճել են 78.2 մլրդ. ՀՀ դրամով (8,2 %) կամ 258.2 մլն. ԱՄՆ դոլարով (14,1%):

5.3.2 Ռեզիդենտների կողմից ձեռքբերված արտարժույթային պետական պարտատոմսերն աճել է 9.7 մլրդ. ՀՀ դրամով (23,0 %) կամ 24.1 մլն. ԱՄՆ դոլարով (29,9%) (տես՝ Հավելված 1 և Հավելված 2):

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը. Արձագանքը բացակայում է:

Հաշվեքննության օբյեկտի 2021թ. հոկտեմբերի 21-ի թիվ 01/17-1/17127-2021 գրությունը կցվում է (3 էջ):

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԱՆԴԱՄ Դ. ՉԻԲՈՒԽՉՅԱՆ

7. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1

2021 թվականի վեց ամիսների ՀՀ պետական պարտքի, ՀՀ կառավարության պարտքի (արտաքին և ներքին) վերաբերյալ

Թիվ	Ցուցանիշներ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2021թ. հունիսի 30-ի դրությամբ		2021թ առաջին կիսամյակի ընթացքում առաջացած տարբերությունները (աճ /+ / , նվազում / - /)			
		Մլրդ. ՀՀ դրամ	Մլն. ԱՄՆ դոլար	Մլրդ. ՀՀ դրամ	Մլն. ԱՄՆ դոլար	Մլրդ. ՀՀ դրամ	Տոկոս (%)	Մլն. ԱՄՆ դոլար	Տոկոս (%)
1	**ՀՀ պետական պարտք,** ընդամենը, *որից՝*	4,164.3	7,968.5	4,393.5	8,869.0	229.2	5.5	900.5	11.3
2	**ՀՀ կառավարության պարտք** *(տող 2.1 + տող 2.2),* ընդամենը,	3,923.9	7,508.6	4,161.4	8,400.9	237.5	6.1	892.3	11.9
2.1	Կառավարության **արտաքին** պարտք ընդամենը, *(տող 2.1.1 + տող 2.1.2 + 2.1.3 + 2.1.4), այդ թվում՝*	2,926.3	5,599.5	3,075.9	6,209.5	149.6	5.1	610.0	10.9
2.1.1	*Արտաքին վարկեր և փոխառություններ*	2,438.0	4,665.2	2,253.4	4,549.0	-184.6	-7.6	-116.2	-2.5
2.1.2	*Ոչ ռեզիդենտների կողմից ձեռքբերված պետական գանձապետական պարտատոմսեր*	3.3	6.3	3.4	6.9	0.1	3.0	0.6	9.5
2.1.3	*Ոչ ռեզիդենտների կողմից ձեռքբերված արտարժույթային պետական պարտատոմսեր*	480.5	919.4	815.0	1,645.3	334.5	69.6	725.9	79.0
2.1.4	**Արտաքին երաշխիքներ**	4.5	8.6	4.1	8.3	-0.4	-8.9	-0.3	-3.5
2.2	Կառավարության **ներքին** պարտք (տող 2.2.1 + տող 2.2.2) ընդամենը, *այդ թվում՝*	997.6	1,909.1	1,085.5	2,191.4	87.9	8.8	282.3	14.8
2.2.1	*Ռեզիդենտների կողմից ձեռքբերված պետական գանձապետական պարտատոմսեր*	955.5	1,828.5	1,033.7	2,086.7	78.2	8.2	258.2	14.1
2.2.2	*Ռեզիդենտների կողմից ձեռքբերված արտարժույթային պետական պարտատոմսեր*	42.1	80.6	51.8	104.7	9.7	23.0	24.1	29.9

Հավելված 2

ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքի վերաբերյալ

Թիվ	Ցուցանիշներ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2021թ. հունիսի 30-ի դրությամբ		2021թ առաջին կիսամյակի ընթացքում առաջացած տարբերությունները (աճ /+ / , նվազում / - /)	
		Մլրդ. ՀՀ դրամ	Տեսակարար կշիռը (%)	Մլրդ. ՀՀ դրամ	Տեսակարար կշիռը (%)	Մլրդ. ՀՀ դրամ	Տոկոս (%)
1	**ՀՀ կառավարության պարտք** ընդամենը, *այդ թվում՝*	**3,923.9**	*100.0*	**4,161.4**	*100.0*	**237.5**	*6.1*
1.1	Կառավարության **ներքին** պարտք	**997.6**	*25.4*	**1,085.5**	*26.1*	**87.9**	*8.8*
1.2	Կառավարության **արտաքին** պարտք	**2,926.3**	*74.6*	**3,075.9**	*73.9*	**149.6**	*5.1*

ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ գործիքակազմի

1	**Արտաքին վարկեր և փոխառություններ**	**2,438.0**	*62.1*	**2,253.4**	*54.1*	***-184.6***	*-7.6*
2	**Պետական գանձապետական պարտատոմսեր** ընդամենը, *այդ թվում՝*	**958.8**	*24.4*	**1,037.1**	*24.9*	***78.3***	*8.2*
2.1	*Ոչ ռեզիդենտների կողմից ձեռքբերված*	**3.3**	*0.1*	**3.4**	*0.1*	***0.1***	*3.0*
2.2	*Ռեզիդենտների կողմից ձեռքբերված*	**955.5**	*24.3*	**1,033.7**	*24.8*	***78.2***	*8.2*
3	**Արտարժույթային պետական պարտատոմսեր** ընդամենը, *այդ թվում՝*	**522.6**	*13.3*	**866.8**	*20.8*	***344.2***	*65.9*
3.1	*Ոչ ռեզիդենտների կողմից ձեռքբերված*	**480.5**	*12.2*	**815.0**	*19.6*	***334.5***	*69.6*
3.2	*Ռեզիդենտների կողմից ձեռքբերված*	**42.1**	*0.1*	**51.8**	*1.2*	***9.7***	*23.0*
4	**Արտաքին երաշխիքներ**	**4.5**	*0.1*	**4.1**	*0.1*	***-0.4***	*-8.9*